

**ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

(Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի օգտագործմամբ)

Հայաստանի Հանրապետություն  
ք. Երևան

----- 2007թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետև՝ Կենտրոնական բանկ), գործելով համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ի դեմս Կենտրոնական բանկի նախագահ Տ. Սարգսյանի՝ մի կողմից, և -----  
-----» բանկը (այսուհետև՝ Բանկ), գործելով համաձայն Բանկի կանոնադրության, ի դեմս գործադիր տնօրեն (վարչության նախագահ) -----  
----- մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), սահմանում են, որ միմյանց միջև Կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերով ռեպո գործարքները կնքելու են սույն համաձայնագրով սահմանված կարգով՝ պահպանելով սույն համաձայնագրի պահանջները:

**Հոդված 1. Ընդհանուր դրույթներ**

- 1.1 Սույն համաձայնագրի իմաստով՝
  - 1.1.1. Ռեպո՝ գործարք, որի ժամանակ Բանկը Կենտրոնական բանկին է օտարում սույն համաձայնագրով նախատեսված Արժեթղթերը՝ Մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ Կենտրոնական բանկը սեփականության իրավունքով ձեռք է բերում Արժեթղթերը՝ դրանք Մարման օրը վերավաճառելու պարտավորությամբ.
  - 1.1.2. Արժեթուղթ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսեր, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում.
  - 1.1.3. Աճուրդ՝ Կենտրոնական բանկի կողմից Ռեպո գործարք կնքելու նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որին բանկերը ներկայացնում են հայտեր.
  - 1.1.4. Աճուրդի օր՝ Կենտրոնական բանկի կողմից Ռեպո գործարք կնքելու նպատակով կազմակերպվող մրցութային գործընթացի կազմակերպման օր.
  - 1.1.5. Բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպության կողմից թողարկված պարտատոմս՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման կարգի» համաձայն Ա+-ից Գ - վարկանիշ ստացած առևտրային կազմակերպության կողմից թողարկված է ՀՀ ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսեր.
  - 1.1.6. ՀՏ 505՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաղորդագրության էլեկտրոնային ֆորմատ՝ Ռեպո կամ Հակադարձ ռեպո գործարքի աճուրդի հայտ.

- 1.1.7. ՀՏ 512՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաղորդագրության էլեկտրոնային ֆորմատ՝ Ռեպո կամ Հակադարձ ռեպո գործարքի աճուրդին մասնակցած հայտի պատասխան.
- 1.1.8. ՀՏ 534՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաղորդագրության էլեկտրոնային ֆորմատ՝ գործառնության ծանուցման հաղորդագրություն.
- 1.1.9. Հայտ՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկին ներկայացված Ռեպո գործարք կնքելու առաջարկ (ՀՏ 505).
- 1.1.10. Հայտի հաստատում (մասնակի հաստատում)՝ հայտը ստացողի ծանուցումը հայտը ուղարկողին՝ վերջինիս կողմից ներկայացված Ռեպո գործարք կնքելու առաջարկն ընդունելու (մասնակի ընդունելու) վերաբերյալ (ՀՏ 512). Բանկի կողմից Կենտրոնական բանկ առաքված ցանկացած Հայտ բովանդակում է նաև Հայտում նշված պայմանների որոշ մասով (մասնակի բավարարմամբ) գործարքի կնքման օֆերտա և Կենտրոնական բանկի կողմից նման Հայտի որոշ մասով (մասնակի) բավարարումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի իմաստով լրիվ և անվերապահ ակցեպտ է.
- 1.1.11. Հայտի մերժում՝ հայտը ստացողի ծանուցումը հայտն ուղարկողին՝ վերջինիս կողմից ներկայացված Ռեպո գործարք կնքելու առաջարկը մերժելու վերաբերյալ (ՀՏ 512).
- 1.1.12. Գործարքի ծավալ՝ Արժեթղթի անվանական արժեքը.
- 1.1.13. Գործարքի գին՝ Արժեթղթի ընթացիկ գինը.
- 1.1.14. Գործարքի կնքման օր՝ այն օրն է, երբ Կենտրոնական բանկը հաստատում (մասնակի հաստատում) է Բանկի կողմից ներկայացված Հայտը.
- 1.1.15. Գործարքի կատարման օր՝ այն օրն է, երբ Բանկի և Կենտրոնական բանկի կողմից կատարվում են Գործարքի պայմաններով ստանձնած պարտավորությունները, այն է՝ Բանկի կողմից Կենտրոնական բանկի դեպո հաշվին մուտքագրվում են գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերը, իսկ Կենտրոնական բանկի կողմից Բանկի Կենտրոնական բանկում գտնվող թղթակցային հաշվին մուտքագրվում է ՀՀ դրամը.
- 1.1.16. Գործարքի մարման օր՝ այն օրն է, երբ Բանկի և Կենտրոնական բանկի կողմից կատարվում են Գործարքի պայմաններով ստանձնած պարտավորությունները, այն է՝ Բանկի Կենտրոնական բանկում գտնվող թղթակցային հաշվի վրա ապահովվում են Ռեպո գործարքի դրամական միջոցներն ու տոկոսագումարը, իսկ Կենտրոնական բանկի կողմից Բանկի դեպո հաշվին մուտքագրվում են գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերը.
- 1.1.17. Աշխատանքային օր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տոնի և հիշատակի ոչ աշխատանքային օրերից և շաբաթ և կիրակի օրերից բացի ցանկացած օր.
- 1.1.18. Պահառու՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Դեպոզիտարիան է, որը ինքնակարգավորվող կազմակերպություն է և իրականացնում է կենտրոնացված պահառուի, արժեթղթերի ռեեստրի, ինչպես նաև հաշվանցման (քլիրինգի) և վերջնահաշվարկի գործառնությունները.
- 1.1.19. «Դեպո» հաշիվ՝ Պահառուի կողմից վարվող Արժեթղթերի հաշվառման անձնական հաշիվ.
- 1.2. Սույն համաձայնագրով նախատեսված Ռեպո գործարքի առարկա կարող են հանդիսանալ բացառապես սույն համաձայնագրով նախատեսված Արժեթղթերը, որոնց մինչև մարում մնացած օրերի թիվը մեծ է Ռեպո գործարքի ժամկետից, ինչպես նաև Ռեպո գործարքի Կատարման օրվանից սկսած մինչև Մարման օրը ներառյալ ընկած ժամանակահատվածում տեղի չի ունենում արժեկտրոնի

վճարում: Մարման օրը վերավաճառվում են գործարքի առարկա հանդիսացող միևնույն Արժեթղթերը:

- 1.3. Կողմերը սահմանում են, որ որպես Ռեպո Գործարքի առարկա Արժեթղթերի գնի հաշվարկման համար հիմք է ընդունվում Կենտրոնական բանկի կողմից «Սի Բի Էյ Նեթ» համակարգչային ցանցում օրական կտրվածքով հրապարակվող Արժեթղթերի ընթացիկ գինը:

## **Հոդված 2. Գործարքների և հաշվարկների իրականացման կարգը**

- 2.1. Ռեպո գործարքներ իրականացնելիս Արժեթղթերի շարժն ապահովվում է Պահառուի կողմից վարվող Կողմերի դեպո հաշիվներով, իսկ դրամական միջոցների փոխանցումները կատարվում են Կենտրոնական բանկում վարվող Բանկի թղթակցային և Կենտրոնական բանկի դրամային հաշիվներով:
- 2.2. Ռեպո գործարքի կնքումը կատարվում է հետևյալ ընթացակարգերի համաձայն.
  - 2.2.1. Բանկը Կենտրոնական բանկի հայտարարության հիման վրա Կենտրոնական բանկին Ռեպո գործարք իրականացնելու Հայտ է ներկայացնում:
  - 2.2.2. Հայտերն Աճուրդին ներկայացվում են էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով՝ Բանկի մոտ տեղակայված «ՍիԲիԷյՆեթ» համակարգի աշխատանքային կայանից, Կենտրոնական բանկի կողմից սահմանված ֆորմատներով: Աճուրդի նույն մասնակցից երկու միատեսակ հայտ ստանալու դեպքում ընդունվում է առաջին ստացված հայտը: Համակարգ մուտքագրված հայտը չի կարող հետ կանչվել, և դրանում փոփոխություններ չեն կարող կատարվել:
  - 2.2.3. Բանկը Աճուրդին Հայտ է ներկայացնում Կենտրոնական բանկի կողմից տվյալ Աճուրդի վերաբերյալ տրված հայտարարության ժամից մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը:
  - 2.2.4. Բանկերի հայտերը համակարգ մուտքագրվելու պահին անմիջապես ստուգվում են համակարգի կողմից: Աճուրդի պայմանների և/կամ առանձին հայտին ներկայացվող սահմանափակումների խախտման դեպքում հայտը մերժվում է, ինչի մասին աճուրդի մասնակիցը տեղեկացվում է ՀՏ 534 հաղորդագրության միջոցով: Հայտը մերժված լինելու դեպքում աճուրդի մասնակիցը կարող է մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը ներկայացնել նոր հայտ:
  - 2.2.5. Եթե Բանկը տարբեր տեսակի վթարների հետևանքով հայտերն ուղարկելու հնարավորություն չունի, ապա այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկի կողմից լիազորված աշխատակիցներին և հայտը (հայտերը) մուտքագրում է Կենտրոնական բանկում տեղադրված հատուկ աշխատանքային կայանից մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամի ավարտը:
  - 2.2.6. Եթե աճուրդի օրվա մինչև հայտերի ընդունման համար սահմանված ժամը աճուրդի պոտենցիալ մասնակիցների 20%-ը սույն համաձայնագրի 2.2.5. կետում սահմանված կարգով Կենտրոնական բանկին տեղեկացրել են հայտերի ուղարկման անհնարինության մասին, ապա աճուրդային գործընթացը դադարեցվում է և 1,5 ժամվա ընթացքում Բանկին հայտարարվում է աճուրդը վերսկսելու, տեղափոխելու կամ չեղյալ համարելու մասին:
  - 2.2.7. Բանկը Ռեպո գործարքի հայտում նշում է Գործարքի այն ծավալը, որը Բանկն առաջարկում է վաճառել Կենտրոնական բանկին:
  - 2.2.8. Կենտրոնական բանկը Բանկի կողմից ներկայացված հայտը պարտավոր է հաստատել (մասնակի հաստատել) կամ մերժել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության անուղղակի

գործիքներ և դրանց կիրառման մեխանիզմներ» փաստաթղթով սահմանված ժամերի ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից Բանկի հայտը հաստատելու (մասնակի հաստատելու) կամ մերժելու դեպքում Կենտրոնական բանկը ծանուցում է Բանկին ՀՏ 512 հաղորդագրության միջոցով:

- 2.2.9. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում մերժել Բանկի կողմից ներկայացված Հայտը:
- 2.2.10. Եթե Բանկը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամանակահատվածում ստանում է Հայտի հաստատումը կամ մասնակի հաստատումը, ապա գործարքը համարվում է կնքված:
- 2.3. Ռեպո գործարքի կնքման դեպքում Բանկը Գործարքի կատարման օրվա մինչև ժամը 13.30-ը Պահառուին է ներկայացնում Գործարքի ծավալի չափով Արժեթղթի փոխանցման հանձնարարագիրը՝ Կենտրոնական բանկի դեպո հաշվին Արժեթղթերը փոխանցելու համար, իսկ Կենտրոնական բանկը, Պահառուից ստանալով իր դեպո հաշվին Արժեթղթերի փոխանցումը հավաստող տեղեկանքը, մուտքագրում է Գործարքի գնի դրամային համարժեքի չափով դրամը Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին հետևյալ ժամկետներում՝
  - ա) մինչև ժամը 15.30-ը, եթե Արժեթղթերի մուտքագրման վերաբերյալ Պահառուից տեղեկացել է Գործարքի կատարման օրվա մինչև ժամը 15.00-ը,
  - բ) մինչև ժամը 17.30-ը, եթե Արժեթղթերի մուտքագրման վերաբերյալ Պահառուից տեղեկացել է Գործարքի կատարման օրվա ժամը 15.00-ից մինչև 16.30-ն ընկած ժամանակահատվածում:
- 2.4. Բանկը Գործարքի մարման օրվա ժամը 11.30-ի դրությամբ պարտավոր է ապահովել Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվին Գործարքի գնի դրամային համարժեքի չափով դրամը և Ռեպո տոկոսադրույքին համապատասխան գումարը (այսուհետև՝ Ռեպո գործարքի գումարը), որի պայմաններում Կենտրոնական բանկը մինչև ժամը 12.00-ն Պահառուին է ներկայացնում Գործարքի ծավալի չափով Արժեթղթի փոխանցման հանձնարարագիրը՝ Բանկի դեպո հաշվին Արժեթղթերը փոխանցելու համար և, Պահառուից ստանալով իր դեպո հաշվից Արժեթղթերի փոխանցումը հավաստող տեղեկանքը, Կենտրոնական բանկում գտնվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպո) կարգով գանձում է Ռեպո գործարքի գումարը:
- 2.5. Ռեպո գործարքով նախատեսված տոկոսները հաշվարկվում են կնքմանը հաջորդող օրացուցային օրվանից մինչև գործարքով սահմանված Մարման օրը (ներառյալ), ընդ որում տոկոսները վճարվում են Մարման օրը:
- 2.6. Մարման օրը ոչ աշխատանքային օրվան համընկնելու դեպքում Մարման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:
- 2.7. Սույն համաձայնագրի համաձայն իրականացվող դեպո հաշվարկները կատարվում են ըստ «\_\_\_\_\_ կողմերի միջև կնքված» պայմանագրի:
- 2.8. Կողմերը պարտավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում ապահովել կատարվող գործառնությունների գաղտնիությունը:

### **Հոդված 3. Կողմերի պատասխանատվությունը**

- 3.1. Եթե Կենտրոնական բանկը մինչև Գործարքի կատարման օրվա ժամը 16.30-ը Պահառուից չի տեղեկացվել Գործարքի ծավալի չափով Արժեթղթերը իր դեպո հաշվին փոխանցման վերաբերյալ, ապա հայտը և հայտի հաստատումն ուժը կորցրած են համարվում և Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվին չի

մուտքագրում համապատասխան դրամական միջոցներ: Բանկը վճարում է Կենտրոնական բանկին տուժանք՝ հայտում նշված գործարքի ծավալի 1%-ի չափով, եթե Գործարքի կատարման օրը Բանկի կողմից Արժեթղթի փոխանցման հանձնարարագիրը Պահառուին չի ներկայացվել կամ ներկայացվել է ուշացումով և մերժվել է:

- 3.2. Եթե Կենտրոնական բանկը Պահառուից տեղեկացվել է Գործարքի ծավալի չափով Արժեթղթերն իր դեպո հաշվին մուտքագրելու վերաբերյալ Գործարքի կատարման օրվա մինչև ժամը 15.00-ը և Բանկի Կենտրոնական բանկում գտնվող թղթակցային հաշվին Գործարքի գնի դրամային համարժեքի չափով դրամը մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը չի մուտքագրել, ապա հայտը և հայտի հաստատումն ուժը կորցրած են համարվում և Կենտրոնական բանկը վճարում է Բանկին տուժանք՝ հայտում նշված գործարքի ծավալի 1%-ի չափով:
- 3.3. Եթե Կենտրոնական բանկը Պահառուից տեղեկացվել է Գործարքի ծավալի չափով Արժեթղթերն իր դեպո հաշվին մուտքագրելու վերաբերյալ Գործարքի կատարման օրվա ժամը 15.00-ից մինչև 16.30-ը ընկած ժամանակահատվածում և Բանկի Կենտրոնական բանկում գտնվող թղթակցային հաշվին Գործարքի գնի դրամային համարժեքի չափով դրամը մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը չի մուտքագրել, ապա հայտը և հայտի հաստատումն ուժը կորցրած են համարվում և Կենտրոնական բանկը վճարում է Բանկին տուժանք՝ հայտում նշված գործարքի ծավալի 0.5%-ի չափով:
- 3.4. Եթե Գործարքի կատարման օրվա ժամը 15.00-ի դրությամբ Կենտրոնական բանկը Պահառուից տեղեկացվել է Գործարքի ծավալի չափով Արժեթղթերն իր դեպո հաշվին մուտքագրելու վերաբերյալ և Բանկի Կենտրոնական բանկում գտնվող թղթակցային հաշվին Գործարքի գնի դրամային համարժեքի չափով դրամը մուտքագրել է ուշացումով՝ նույն օրվա ժամը 15.30-ից հետո մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, ապա Կենտրոնական բանկը վճարում է Բանկին տուժանք՝ հայտում նշված գործարքի ծավալի 0.5%-ի չափով:
- 3.5. Եթե Գործարքի մարման օրվա ժամը 11.30-ի դրությամբ Բանկի թղթակցային հաշվին առկա չէ Ռեպո գործարքի գումարը, ապա Բանկը Կենտրոնական բանկին վճարում է տուժանք՝ Ռեպո գործարքի ծավալի 0.5%-ի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար:  
Մույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված տուժանքները հաշվարկվում են Մարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից առավելագույնը մեկ Աշխատանքային օր: Եթե գործարքի մարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11.30-ի դրությամբ Բանկի թղթակցային հաշվին առկա չէ Ռեպո գործարքի գումարը, ապա Բանկը Կենտրոնական բանկին վճարում է տուժանք՝ Ռեպո գործարքի ծավալի 0.5%-ի չափով և Ռեպո գործարքի Կողմերի միջև դադարում են այդ գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները:
- 3.6. Եթե Գործարքի մարման օրվա ժամը 11.30-ի դրությամբ Բանկի թղթակցային հաշվին առկա է Ռեպո գործարքի գումարը, իսկ Կենտրոնական բանկի կողմից Արժեթղթի փոխանցման հանձնարարագիրը Գործարքի մարման օրը Պահառուին չներկայացնելու կամ ուշացումով ներկայացնելու հետևանքով չի ապահովվել Գործարքի մարման օրվա մինչև ժամը 13.30-ը գործարքի առարկա հանդիսացող Արժեթղթերի մուտքագրումը Բանկի «դեպո» հաշվին, ապա Կենտրոնական բանկը վճարում է Բանկին տուժանք՝ Հայտում նշված Ռեպո գործարքի ծավալի 0.5%-ի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար: Բանկը ժամը 13.30-ից հետո կարող է ազատ տնօրինել իր թղթակցային հաշվին առկա Ռեպո գործարքի գումարը:  
Մույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված տուժանքները հաշվարկվում են Մարման օրվան հաջորդող օրացուցային օրվանից

առավելագույնը մեկ Աշխատանքային օր: Եթե գործարքի մարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11.30-ի դրությամբ Բանկի թղթակցային հաշվին առկա է Ռեպո գործարքի գումարը, իսկ Կենտրոնական բանկի կողմից Արժեթղթերի փոխանցման հանձնարարագիրը Գործարքի մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը Պահառուին չներկայացնելու կամ ուշացումով ներկայացնելու հետևանքով չի ապահովվել Գործարքի մարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա մինչև ժամը 13.30-ը գործարքի առարկա հանդիսացող Արժեթղթերի մուտքագրումը Բանկի «դեպո» հաշվին, ապա Կենտրոնական բանկը վճարում է Բանկին տուժանք՝ Հայտում նշված Ռեպո գործարքի ծավալի 0.5%-ի չափով և Ռեպո գործարքի կողմերի միջև դադարում են այդ գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները:

- 3.7. Եթե Գործարքի մարման օրվա (մարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա) ժամը 11.30-ի դրությամբ Բանկի թղթակցային հաշվին առկա է Ռեպո գործարքի գումարը, այդ օրվա մինչև ժամը 16.30-ը Կենտրոնական բանկը Պահառուից տեղեկացվել է Գործարքի ծավալի չափով Արժեթղթերն իր դեպո հաշվից ելքագրելու վերաբերյալ և մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը Կենտրոնական բանկը Բանկի թղթակցային հաշվից չի ելքագրել Ռեպո գործարքի գումարը, ապա Կենտրոնական բանկը վճարում է Բանկին տուժանք՝ Հայտում նշված Ռեպո գործարքի ծավալի 1.0%-ի չափով և Ռեպո գործարքի կողմերի միջև դադարում են այդ գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները:
- 3.8. Եթե Գործարքի մարման օրվա (մարման օրվան հաջորդող աշխատանքային օրվա) ժամը 11.30-ի դրությամբ Բանկի թղթակցային հաշվին առկա է Ռեպո գործարքի գումարը, այդ օրվա մինչև ժամը 16.30-ը Կենտրոնական բանկը Պահառուից չի տեղեկացվել Գործարքի ծավալի չափով Արժեթղթերն իր դեպո հաշվից ելքագրելու վերաբերյալ, ապա Ռեպո գործարքի կողմերի միջև դադարում են այդ գործարքից բխող իրավունքներն ու պարտականությունները:
- 3.9. Սույն համաձայնագրով Կենտրոնական բանկին իրավունք է վերապահվում իր կողմից վարվող Բանկի թղթակցային հաշվից անվիճելի (անակցեպո) կարգով գանձել Ռեպո գործարքի գումարը, ինչպես նաև սույն հոդվածով նախատեսված տուժանքի գումարները:
- 3.10. Սույն հոդվածի 3.1, 3.2, 3.3, 3.5, 3.6, 3.7, 3.8 կետերի համաձայն հայտը և հայտի հաստատումն ուժը կորցրած համարվելու (կողմերի միջև Ռեպո գործարքը դադարելու) դեպքում, եթե արժեթղթերը մուտքագրված են եղել Կենտրոնական բանկի (Բանկի) դեպո հաշվին, ապա Կենտրոնական բանկը (Բանկը) պարտավոր է ոչ ուշ քան մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ին վերադարձնել այդ արժեթղթերը Բանկի (Կենտրոնական բանկի) դեպո հաշվին:

#### **Հոդված 4. Վեճերի լուծման կարգը**

- 4.1. Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ երեսնօրյա ժամկետում: Սույն համաձայնագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարզաբանման հինգ Աշխատանքային օրվա ընթացքում:
- 4.2. Առաջացած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

## **Հոդված 5. Հատուկ պայմաններ**

Սույն համաձայնագրի լրացումները և փոփոխությունները համարվում են օրինական, եթե վերջիններս գրավոր ձևով կազմված, համատեղ ստորագրված և կնքված են Կողմերի կողմից:

## **Հոդված 6. Համաձայնագրի գործողության ժամկետը**

- 6.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:
- 6.2. Բանկին անվճարունակ, Բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից սույն համաձայնագիրը համարվում է դադարած:
- 6.3. Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում (ներառյալ սույն համաձայնագրի 6.2. կետում նախատեսված դեպքի) Կողմերի՝ սույն համաձայնագրով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ, կամ եթե Կողմերը այլ բան չեն պայմանավորվում:
- 6.4. Սույն համաձայնագիրը կարող է լուծվել կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ տեղեկացնելու պայմանով:
- 6.5. Բանկը (Կենտրոնական բանկը) պարտավորվում է եռօրյա ժամկետում գրավոր ձևով Կենտրոնական բանկին (Բանկին) տեղեկացնել իր հասցեի, վճարային ռեկվիզիտների, տելեքսի, հեռատիպի, հեռախոսի, ֆաքսի, այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են սույն համաձայնագրով սահմանված դրույթների կատարումը:

## **Հոդված 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)**

Սույն համաձայնագրի դրույթները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է հանդիսացել պարտավորությունների կատարման վրա էականորեն ազդող անհաղթահարելի ուժի ազդեցության:

Սույն կետի իմաստով անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքներ չեն համարվում գործադուլները, սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը Կողմերի կոնտրագենտների կողմից և այլ հանգամանքներ, որոնք սույն պայմանագրի դրույթները խախտող կողմը կարող էր վերացնել՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ:

## **Հոդված 8. Այլ դրույթներ**

8.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից Կողմերի միջև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 1/146Ա որոշումով հաստատված ձևով կնքված «Ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը» (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի օգտագործմամբ) համարվում է լուծված:

8.2. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է 2 օրինակից, 8 էջից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրամադրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

**Հոդված 9. Կողմերի ռեկվիզիտները**

<b>Կենտրոնական բանկ</b>	<b>Բանկ</b>
Հայաստանի Հանրապետություն	Հայաստանի Հանրապետություն
375010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6	_____
Հեռախոս՝ _____	Հեռախոս՝ _____
Ֆաքս՝ _____	Ֆաքս՝ _____
ՀՀ ԿԲ դեպո հաշիվ _____	Դեպո հաշիվ _____
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝	Բանկի տնօրեն (վարչության նախագահ)՝
Տիգրան Սարգսյան	_____
Կ.Տ.	Կ.Տ.